# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գավառի Օրհուս կենտրոնի 2014թ. Հունվար -Դեկտեմբերի ամիսների կատարած աշխատանքների մասին

2014 թվականին Գավառի Օրհուս կենտրոնը շարունակել է իր գործունեությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայի 2 դրույթներով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավածություն որոշումներ կայացնելու գործընթացում):

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում Գավառի Օրհուս կենտրոնում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ ինչպես համատեղ, այնպես էլ մեր կենտրոնի նախաձեռնությամբ: 2014 թվականի ընդհանուր միջոցառումների քանակը 35 է, որից 19-ը Օրհուսի նախաձեռնությամբ, 16-ը՝ համատեղ: 36-ից 4-ը՝ հանրային քննարկում, 16-ը առնչվել են տեղեկատվության մատչելիությանը, 3-ը՝ հասարակայնության մասնակցությանը և 3 էկո կրթական միջոցառում: Միջոցառումների մասնակիցների քանակը՝ 312 է, որից տղամարդ՝ 139, կին՝ 173: 16 Գրադարանից օգտվողների քանակը՝ 15, ֆիլմադարանից օգտվողների քանակը՝ 7, խորհրդատվության նպատակով կենտրոն են դիմել 2 հոգի, ընդհանուր այցելուներ քանակը՝ 27, հարցումների քանակը՝ 15:

Կենտրոնն աշխատանք է տարել Հայաստանում և մասնավորապես մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածման, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակների ներկայացման ուղղությամբ, առաջարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ՝ ակտիվ համագործակցելով Էկոդաշինքի, “Էկոլուր” ՀԿ-ի, “Հայ կանայք հանուն առողջության և շրջակա միջավայրի” ՀԿ-ի, Գեղարքունիքի մարզպետարանի, Հայկական Կարիտասի Գավառի մասնաճյուղի հետ:





Գավառի ՕԿ-ն նախաձեռնել և կազմակերպել է 3 էկոկրթական միջոցառում ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում և Հայաստանում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ:





Սևանի խնդրի հանրայնացնելու նպատակով Գավառի Օրհուս կենտրոնը համակարգել է Գեղարքունիքի մարզի ՀԿ-ների աշխատանքն այս ուղղությամբ:





Գավառի Օրհուս կենտրոնի համակարգողը մասնակցել է Երևանում, ինչպես նաև Գավառ քաղաքում տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվելիք 16 հանդիպումներին, վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ցուցաբերել 3 մամլո ասուլիսի՝ կազմակերպված Էկոլուր մամուլի ակումբում, ինչպես նաև մասնակցել է ԱՐՄԵՆԻԱ Հեռուստաընկերության մարդկային գործոն և Ճանապարհ, հաղորդաշարներին՝ նվիրված Սևանա լճի հիմնախնդիրներին: Նշեմ նաև, որ մեր կենտրոնի կողմից իրականացրած գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է մարզային <<Գեղամա>> հեռուստաընկերությամբ, ինչպես նաև <<Գեղամա աշխարհ>> թերթում:




Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկից ավել հարցում է ուղարկվել իրավասու մարմիններին և ստացված տեղեկատվությունը տարածվել հանրության շրջանակներում, Օրհուսի կայքի և այլ սոց կայքերի միջոցով: Հարցումները մասնավորապես վերաբերվել են Սևանա լճից ոռոգման նպատակով ջրբացթողումներին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Բնապահպանական ծրագրերի համակարգողին Սևանա լճի ծրագրերի հետ կապված, Արփիճի փետի վրա կառուցված ՓՀԷԿ-ի խողովակների պայթյունի հետ կապված և դրա պատճառած վնասների չափի մասին: Հարցումների ընդհանուր քանակը 15 է, իսկ ստացված պատասխանները` 9-ը:





ՕԿ-ների գործունեությունն անընդհատ եղել է միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում: Սույն թվականի սեպտեմբերի 1-ին աշխատանքային այցով Հայաստանում էր ԵԱՀԿ քարտուղարության Տնտեսական ու բնապահպանական գործողությունների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ տիկին Դեզիրե Աշվերյոզերը, ով նաև այցելեց մեր կենտրոն` տեղում ծանոթանալու կենտրոնի գործունեությանը: Գավառում հյուրերը Օրհուս կենտրոններիներկայացուցիչներից զատ հանդիպեցին նաև Գեղարքունիքի փոխմարզպետ Ա. Հակոբյանին և մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին, ովքեր կարևորեցին Օրհուս կենտրոնների դերը` ի դեմս Գավառի կենտրոնի:



Կենտրոնի աշխատանքային գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները ներկայացվել են փորձագետների խորհրդի անդամներին օնլայն տարբերակով, քանի որ խիստ զբաղվածության պատճառով, փորձագետները չեն կարողացել մասնակցել նիստին:



Գավառի Օրհուս կենտրոնի կողմից ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համառոտ հաշվետվությունը և նյութերը (միջոցառման արձանագրությունը, լուսանկար, գրանցման թերթիկ, տեսանյութ, օրակարգ, հայտարարություն, շնորհանդես և այլն) պատշաճ կերպով և ժամանակին ներկայացվել են ծրագրի ղեկավարին և PR մենեջերին:

Մարինե Մազմանյան

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

15.12.14թ.